

ՄԱՍ 6. ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

Պետական վիճակագրության ոլորտում 2007-2009 թվականներին իրականացման ենթակա վերը նշված և այլ միջոցառումների ֆինանսավորումը նախատեսվում է իրականացնել հետևյալ հիմնական եղանակներով (աղբյուրներից)՝

ա) պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրերով նախատեսված աշխատանքների իրականացման համար՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցները (այդ թվում՝ ոչ հարկատուների կողմից տրամադրված միջոցները):

բ) պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրերից դուրս իրագործվող լրացուցիչ աշխատանքների համար՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից տրամադրվող միջոցները, ինչպես նաև ոչ հարկատուների կողմից տրամադրված միջոցները: